ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆԻ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ամենապատիվ պատրիարք հայոց Թուրքիայի Տ. Շնորհք արքեպիսկոպոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին ժամանեց շաբաթ, 13 հուլիսի 1963 թվականի ժամը 12-ին:

Սրբազան պատրիարքին ուղեկցում էին Տ. Վազգեն վարդապետ Գպրսլյանը և տիար Կարապետ Ղազարյանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը Մայր Տաճարում եղբայրական սիրով դիմավորեց սրբազան պատրիարքին, ջերմապես ողջունելով նորին ամենապատվության պատմական սույն այցելությունը:

Փրկչի Իջման Ս. Սեղանի առաջ, Վեհափառ Հայրապետն ու սրբազան պատրիարքը վերանորոգեցին իրենց միասնության ուխտը և միատեղ աղոթեցին Ս. Եկեղեցվո հաստատության և աշխարհի խաղաղության համար:

Վեհափառ Հայրապետը և սրբազան պատրիարքը ունեցան մտերիմ հանդիպումներ և միասին քննարկեցին Հայ Եկեղեցու ներկա կյանքի և գործունեության հետ կապված մի շարք հարցեր, լիակատար համաձայնությամբ:

Տ. Շնորհք սրբազան պատրիարքը սուրբ պատարագ մատուցեց Մայր Տաճարում հուլիսի 21-ին, Տիրոջ հրաշալի Այլակերպության տոնին, և տվավ իր պատգամը բազմահազար հավատացյալ ժողովրդին:

Սրբազան պատրիարքն այցելեց Էջմիածնի, Ս. Հռիփսիմեի, Ս. Գայանեի, Ս. Շողակաթի, Ս. Գեղարդա, Ս. Խոր Վիրապի, Հաղբատի, Սանահինի, Սևանի, Մարմաշենի և Հառիճա պատմական վանքերը, ինչպես և Երևանի, Կիրովականի և Լենինականի եկեղեցիները:

Սրբազան պատրիարքն այցելեց նաև Օշականում Ս. Մեսրոպի դամբարանը, Երևանի Մատենադարանը, պատմության թանգարանը և Բյուրականի աստղադիտարանը:

Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության նախագահ դոկտ.-պրոֆ. Նագուշ Հարությունյանը հուլիսի 22-ին ընդունեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետին և Թուրքիայի հայոց պատրիարք Տ. Շնորհք արքեպիսկոպոսին: Ընդունելության ընթացքում տեղի ունեցավ բարեկամական ջերմ զրույց:

Տ. Շնորհք պատրիարքը և իր շքախումբը հուլիսի 23-ին հրաժեշտ տվին Նորին Ս. Օծության, իրենց վերադարձի ճանապարհին այցելություն տալով Թբիլիսիի և Մոսկվայի հայոց եկեղեցիներին:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ
23 հուլիսի 1963 թ.

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ Տ. ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ